

Իսլամը հարցերում եւ պատասխաններում

Իսլամը հարցերում եւ
պատասխաններում

<https://islamhouse.com/396069>

- Իսլամը հարցերում եւ
պատասխաններում

- Ողորմած, Գթասիրտ
Ալլահի անունով

-

Նախաբան

-

1. Բազմակնություն

-

2. Բազմամուսնություն

- 3. Հիշար կանանց համար
- 4. Ինչու՞ է Իսլամը տարածվում արդ
- 5. Մուսուլմանները՝ ֆունդամենտալիստներ եւ ահաբեկիչներ
- 6. Սնունդի մասին. Ոչ բուսական խոհանոց
- 7. Կենդանիների սպանդի իսլամական մեթոդը
- 8. Բուսական խոհանոց եւ բռնություն. փոխկապվածություն
- 9. Մուսուլմանները երկրպագում են Կաարի՞ն

- 10. Ինչու՞ է ոչ մուսուլմաններին արգելվում գտնվել Մեքքայում
- 11. Խոզի մսի մասին
- 12. Ալկոհոլի արգելումը
- 13. Վկաների հավասարությունը
- 14. Ժառանգություն
- 15. Ծի՞շտ է, որ Ղուրանը Աստծո խոսքն է

- 16. Կյանք մահից հետո
- 17. Ինչու են մուսուլմանները քաժանված ուղությունների եւ տարբեր դպրոցների
- 18. Եթե բոլոր կրոնները սովորեցնում են մարդկանց լինել արդար, ապա ինչու՞ պետք է հետեւենք Իսլամին
- 19. Մեծ տարբերություն կա Իսլամի եւ նրա միջեւ, ինչ որ կատարում են գործնականում որոշ մուսուլմաններ
- 20. Ոչ մուսուլմաններին անվանում են կաֆիր

ԵՒ հարցերում Իսլամը
պատասխաններում

Գոկտոր Չաքիր Նաիր

Թարգմանություն:

EUROPEAN ISLAMIC
RESEARCHES CENTER (EIRC)

& Հմայակ Նալբանդյան (Hmayak
Nalbandyan)

Ստուգում:

Ախմեդ Հայկական

Ողորմած, Գթասիրտ Ալլահի
անունով

Նախարան

Կանչը հանդիսանում է
որպես մուսուլմանի
պարտականություն:

Մուսուլմանների
մեծամասնությանը հայտնի է, որ
իսլամը հանդիսանում է
համընդհանուր կրոն, որը կոչված
է ողջ մարդկության համար:
Ալլահը (Մուրբ է Նա եւ Մեծ) ողջ
Տիեզերքի Տերն է, եւ
մուսուլմանների վրա է դրված
նրա ուղերձների փոխանցումը
ողջ մարդկությանը: Ավաղ
մուսուլմանների
մեծամասնությունը այսօր դարձել
են անտարբեր այդ պարտքի
նկատմամբ: Չնայած իսլամի
ընդունումը լավագույն

կենսակերպն է, մեր մեծ մասը չի ցանկանում կիսվել այդ գիտելիքներով նրանց հետ, **ուս այդ կանչը դեռ չի հասել:**

Արաբերեն «**դաուա**» բառը նշանակում է կանչ կամ հրավերք. Իսլամական ենթատեքստում դա նշանակում է «**ձգտել իսլամի տարածմանը**»:

Սուրբ Ղուրանը ասում է.

«Ով որդիք Իսրայելի, հիշեք ողորմությունը, **որ ես ձեզ շնորհեցի:** Եղեք հավատարիմ Իմ պատգամներին եւ Ես էլ հավատարիմ կլինեմ ձեր պատգամներին: Միայն ինձանից վախեցեք»: (Ղուրան, 2:140)

Ահա քսան ամենաշատ
 տրվող հարցերը: Որպեսզի
 փոխանցվեն Իսլամի ուղերձները,
 մարդկանց միջեւ անխուսափելի
 դարձան երկխոսություններն ու
 բանավեճերը: Սուրբ Ղուրանը
 ասում է. «Կանչիր դեպի Աստծո
 ճանապարհը իմաստությունը ու
 բարի խորհրդով եւ տար վեճը
 նրանց հետ՝ ամենալավ ձեւով»:
 (Ղուրան 16:125)

Ոչ մուսուլմանական
 երկրներ Իսլամի ուղերձի
 փոխանցման համար, որպես
 կանոն, բավարար չէ այն, որ
 առանձնացնեն Իսլամի միայն
 դրական կողմերը: Ոչ
 մուսուլմանների

մեծամասնությունը համոզված չէ
 Իսլամի ճշմարտության մեջ, քանի
 որ շատերի հոգու խորքում
 Իսլամի մասին կան հարցեր,
 որոնք մնում են անպատասխան:

Նրանք կարող են որոշ
 բաներում համաձայնվել Իսլամի
 դրական բնույթի ձեր
 համոզմունքներում: Բայց հետո
 նրանք անպայման կասեն. «Ախ,
 բայց դուք մուսուլմանների
 ամուսնանում եք ավելի քան մեկ
 կնոջ հետ: Դուք այն մարդիկ եք,
 որոնք կանանց նպատակեցնում
 են՝ պահելով նրանք ծածկի
 ետևում: Դուք ծայրահեղական
 եք եւ այլն»: Ես անձամբ
 նախընտրում եմ միանգամից

հարցնել ոչ մուսուլմաններին,
 չնայած նրանց սահմանափակ
 գիտելիքներին եւ անկախ թե ինչ
 աղբյուրից են նրանք այդ վերցրել,
 կոնկրետ ինչը նրանց դուր չի
 գալիս **Իսլամում**: Ես նրանց կոչ եմ
 անում լինել շատ բաց ու անկեղծ
 եւ աշխատում եմ համոզել նրանց,
 որ կարող եմ ընդունել **Իսլամի
 քննադատումը**: Իմ կոչ անելու
 փորձի վերջին մի քանի
 տարիներին ես հասկացա, որ
 կլինի մոտ քսան ավելի հաճախ
 տրվող հարցեր այն մասին, **թե ինչ
 ընդհանուր բան կան ոչ
 մուսուլմանների եւ Իսլամի միջեւ**:
 Ամեն անգամ, երբ դուք հարցնում
 եք, թե ինչն են նրանք հաշվում
 անընդունելի **Իսլամում**, **նրանք**

առաջարկում են հինգ կամ վեց
հարցեր եւ այդ հարցերը
անկասկած մտնում են այն քսան
ամենատարածված հարցերի մեջ:

Տրամաբանական
պատասխանը կարող է շատերին
համոզել, որ Իսլամի մասին քսան
ամենաշատ տրվող հարցերը
կարող են լուծվել մտքի եւ
դատողության միջոցով: Ոչ
մուսուլմանների
մեծամասնությանը կարելի է
համոզել այս պատասխաններով:
Եթե մուսուլմանը կարող է
ուղղակի հիշել այս
պատասխանները, ապա նա,
ինչպա, կարող է հաջողությամբ
շփվել եւ նույնիսկ եթե նրան

չհաջողվի համոզել ոչ
մուսուլմանին Իսլամի ողջ
ճշմարտության մեջ, ապա,
համենայն դեպս, դա կարող է
օգնել հեռու պահել Իսլամի մասին
մոլորությունից եւ հեռացնել
մուսուլմանների մասին
բացասական կարծիքը: Շատ քիչ
մուսուլմաններ կարող են ունենալ
հակափաստարկներ, որպեսզի
հերքեն այդ պատասխանները,
դրա համար նրանց պետք են
լրացուցիչ տեղեկություններ:

ՉԼՄ-ների հետ
կապված մոլորություններ

Ոչ մուսուլմանների մոտ
Իսլամի մասին մոլորությունների

տարածոււմը ծագում է, քանի որ
նրանք մշտապես ենթարկվում են
Իսլամի մասին

ապատեղեկատվության:

Միջազգային ՉԼՄ-ները
վերահսկվում են հիմնականում
արեւմտյան աշխարհում, լինի դա
միջազգային արքայականային
ալիքներ, ռադիոկայաններ,

թերթեր, **լրագրեր կամ գրքեր:**

Վերջերս ինտերնետն էլ նույնպես
դարձել է ինֆորմցիայի հզոր

աղբյուր: Չնայած դա համարյա ոչ

մի կերպ չի վերահսկվում, **կարելի**

է գտնել Իսլամի մասին մեծ

քանակի բարձր ազդեցությամբ

քարոզչություն Ինտերնետում:

Իհարկէ, մուսուլմաններն էլ են

օգտվում այդ գործիքից, որպեսզի

արտացոլեն Իսլամի ու
մուսուլմանների մասին ճիշտ
պատկերը, սակայն բավականին
հետ են Իսլամի դեմ
քարոզչության համեմատ: Ես
հույս ունեմ, որ մուսուլմանների
ջանքները կավելանա, իսկ
հետագայում կիրականանան:

Մոլորություն
նր փոխվում է ժամանակի
ընթացքում

Իսլամի մասին
ամենահաճախ տրվող հարցերը
տարբեր
ժամանակահատվածներում եւ
դարաշրջաններում տարբեր են:
Այդ ցուցակը որը կազմված է

քսան ամենատարածված
հարցերից կազմված է՝ ելնելով
ներկա ժամանակաշրջանից:
Տասնամյակներ առաջ հարցերի
մեծամասնությունը այլ կերպ էր
հնչում, իսկ տասնամյակներ հետո
կարող են փոխվել, կախված
նրանից, թե Իսլամը ինչպես
կներկայացի ՉԼՄ-ներում:

Մոլորություն
ները նույնն են ամբողջ
աշխարհում

Ես շփվել եմ մարդկանց
հետ աշխարհի տարբեր
անկյուններում եւ տեսա, որ
Իսլամի մասին այդ քսան
համեմատած ավելի հաճախ

տրվող հարցերը ամեն տեղ նույնն են: Հաճախ կարող են լինել մի քանի լրացուցիչ հարցեր՝ կախված տեղանքից, շրջապատից կամ մշակութային սովորույթներից: Օրինակ Ամերկայում, լրացուցիչ ընդհանուր հարցը հնչում է այսպես. «Ինչու է Իսլամը արգելում դրամը տոկոսով տալ եւ վերցնելը»: Ես այդ քսան ամենատարածված հարցերին ավելացրեցի որոշ այլ հարցեր, որոնք ամենաշատն են տարածված հնդիկ ոչ մուսուլմանների մեջ: Օրինակ, «Ինչու մուսուլմանները չեն կիրառում բուսական սնունդ»: Նման հարցերի առաջացման պատճառը նրանում է, որ

Հնդկաստանից գաղթածները
տարածված են աշխարհով մեկ եւ
կազմում են մոտ 20 %-ը, այսինքն
բնակչության մոտ 1/5-ը:

Այսպիսով, նրանց հարցերը մտել
են ընդհանուր հարցերի շարքը,
**որոնք տրվում են ոչ
մուսուլմանների կողմից ողջ
աշխարհում:**

Ոչ մուսուլմանների
մոլորությունները, որ
ուսումնասիրել է Իսլամը

Կան շատ ոչ
մուսուլմաններ, **որոնք
ուսումնասիրել են իսլամը:**

Նրանցից մեծ մասը կարդացել են
միայն գրքեր Իսլամի մասին,

որոնք գրված են եղել Իսլամի կանխակալ քննադատների կոմից: Այդ ոչ մուսուլմանները ունեն Իսլամի մասին քսան ամենատարածված մոլորությունների լրացուցիչ հավաքածու: Օրինակ, նրանք պնդում են, որ գտել են հակասություն Ղուրանում, նրանք պնդում են, որ Ղուրանը հանդիսանում է ոչ գիտական գիրք եւ այլն: Գոյություն ունի լրացուցիչ պատասխանների եւս մեկ հավաքածու, որպեսզի ոչ մուսուլմանների միջից մաքրի այդ քսան մոլորությունները, որ ուսումնասիրել են Իսլամը խեղաթյուրված աղբյուրներից: Ես տալիս եմ այդ քսան լրացուցիչ եւ

ավելի քիչ տարածված հարցերի պատասխանները իմ հանրային քննարկումներում եւ

«Պատասխաններ Իսլամի մասին ոչ մուսուլմանների կողմից հանած տրվող հարցերի, պատասխաններ նրանց, ովքեր ունեն որոշակի գիտելիքներ Իսլամի մասին» գրքում:

1.

Բազմակնություն

Հարց.

Ինչու՞ է մուսուլմանին թույլատրվում ունենալ ավելի քան մեկ կին, այսինքն, **ինչու՞ է բազմակնությունը թույլատրվո՞ծ Իսլամում:**

Պատասխան.

1. Բազմակնություն սահմանումը.

Պազմակնությունը ամուսնության ձեւ է, որտեղ մեկ մարդը կարող է ունենալ մեկից ավելի կին: Բազմակնությունը լինում է երկու երկու տիպի: դրանցից մեկը դա բազմակնությունն է, երբ տղամարդը ամուսնանում է մեկից ավելի կանանց հետ, իսկ մյուս տիպը՝ բազմամուսնությունն է, երբ կինը ամուսնանում է մեկից ավելի տղամարդու հետ: իսկանում սահմանափակ բազմակնությունը թույլատրվում է, այն դեպքում երբ

բազմամուսնությունը արգելված է:

Հիմա գալիս ենք սկզբնական հարցին. **Ինչու՞ է տղամարդուն թույլատրվում ունենալ ավելի քան մեկ կին:**

2. **Ղուրանում միայ կրոնական կարգազրագիր է, որն ասում է. «Ամուսնացեք միայ մեկի հետ»:**

Միայն Ղուրանը, միակ կրոնական կիրքը, պարունակում է արտահայտությունն, որը հնչում է այսպես. **Ամուսնանալ միայն մեկին:** չկա ոչ մի այլ կրոնական գիրք, որը մատնանշում է տղամարդուն ունենալ միայն մեկ

կին: Ոչ մի այլ կրոնական գիր,
 լինի դա Վեդի, Ռամայանա,
 Մախաբխարատա, Գիտա,
 Տալմուդ կամ Աստվածաշունչ,
չենք գտնում կանանց քանակի ոչ
մի սահմանափակում: Այս
 Գրառումներին
 համապատասխանաբար կարելի
 է ամուսնանալ այնքան, **որքան**
պետք է: Եւ միայն հետո
 ինդուլիստական կրոնականները
 եւ քրիստոնեական
 եկեղեցականները որոշեցին
 սահմանափակել կանանց թիվը
 մեկով: Ինդուլիստ
 կրոնականներից շատերը, իր
 գրառումների համաձայն, **ունեին**
մի քանի կին: Դաշրատ
 թագավորը, Ռամի հայրը, ուներ

ավելի քան մեկ կին, **իսկ Կրիշնա
նույնպես ուներ մի քանի կին:**

Նախկինում

քրիստոնյաներին թույլատրվում էր
ունենալ այնքան կին, որքան
նրանք ուզում էին, **քանի որ
Աստվածաշունչը կանանց
քանակի ոչ մի սահմանափակում
չէր դնում:** Եւ միայն մի քանի դար
առաջ եկեղեցին սահմանափակեց
կանանց թիվը մեկով:

Բազմակնությունը թույլատրվում
է նաեւ հուդեաիզմում: Համաձայն
տալմուդական իրավունքի,
Աբրահամը ուներ երեք կին, **իսկ
Սողոմոնը հարյուրավոր:** Այդ
բազմակնության
սովորույթը շարունակվեց մինչեւ

Ռավվինա Գերշում բեն Իեգուդր
 (960 – 1030), որը հրաման
 արձակեց բազմակնության դեմ:
 Հրեական սեֆարդյան համայնքը,
 որ ապրում էր մուսուլմանական
 երկրներում, շարունակում էին
 բազմակնության սովորույթը
 մինչև 1950 թվականը, մինչև
 իսրայելի օրենսդրական գլխավոր
 կառույցը չերկարացրեց
 բազմակնության արգելքը:

(*Հետաքրքիր ծանուցում.
 1975 թվականի գրառումներին
 համապատասխան
 Հնդկաստանում հնդիկները ավելի
 շատ կանայք էին ունենում, քան
 մուսուլմանները: Հանձնաժողովի
 զեկույցում «Կնոջ կարգավիճակը

Իսլամում» հրատարակված 1975 թվականին, 66 եւ 67 էջերում ասվում է, որ բազմակնություն տոկոսը 1951 եւ 1961 թվականներին հնդկացիների մոտ կազմում էր 5,06% եւ միայն 4,31% **մուսուլմանների մոտ:** Համաձայն հնդկական օրենքի, **միայն մուսուլման տղամարդուն է թույլատրվում ունենալ մեկից ավելի կին:** Դա անօրինական է Հնդկաստանի ցանկացած ոչ մուսուլմանի համար ունենալ մեկից ավելի կին: Չնայած դա անօրինական է, **բայց հնդիկները հաճախ ունենում են ավելի շատ կանայք քան մուսուլմանները:** Նախկինում չկար ոչ մի սահմանափակում հնդիկ

տղամարդկանց համար կանանց քանակում: Եւ միայն 1954 թվականին երբ ընդունվեց ամուսնություն մասին օրենքը, հնդիկների համար դարձավ անօրինական ունենալ մեկից ավելի կին: Ներկայումս գործում է հնդկական օրենք, որը արգելում է հնդիկ տղամարդուն ամուսնանալ մի քանի կնոջ հետ միաժամանակ: Եւ դա համաձայն օրենքի եւ ոչ թե հնդկական կրոնական գրառումների: Իսկ հիմա կվերլուծենք թե ինչու է Իսլամը թույլատրում տղամարդուն ունենալ ավելի քան մեկ կին:

3. Ղուրանը թույլատրում է սահմանափակ բազմակնություն

Ինչպես հիշատակեցի
ավելի վաղ, Ղուրանը
հանդիսանում է Աշխարհի միակ
կրոնական գիրքը, որն ասում է.
«ամուսնացեք միայն մեկի հետ»:
Այս արտահայտության
ենթատեքստում ահա թե ինչ է
ասում Սուրբ Ղուրանի Սուրայի
հետեւյալ **«Նիսա»** հատվածում.

«Եթե դուք վախենում եք,
որ արդար չեք լինի որբերի
հանդեպ, ապա ամուսնացեք այլ
կանանց հետ, որոնք ձեզ դուր են
գալիս. Երկուսի, երեքի, **չորսի:**
Եթե դուք վախենում եք, որ չեք
լինի արդարացի հավասարապես,
ապա բավարարվեք մեկով, կամ
ստրկուհով, **որին տիրացել է ձեր**

աջ ձեռքը: Սա մոտ է
 անարդարացիությունը
 խուսափելուն (**կամ
 աղքատությունը**)» [Ղուրան 4:03]:
 Մինչ Ղուրանի ուղարկումը, չկար
 բազմակնության վերին սահման
 եւ շատ տղամարդիկ ունեին
 բազմաթիվ կանայք, **իսկ որոշներն
 էլ նույնիսկ հարյուրավոր:** Իսլամը
 հաստատեց սահմանը մինչու չորս
 կին: Իսլամը թույլատրում է
 մարդուն ամուսնանալ երկուսի
 հետ, երեքի կամ չորս կին ունենալ
 միայն այն դեպքում, **երբ
 տղամարդը նրանց հետ վարվում է
 արդարացի:** Այդ նույն Սուրա
 Նիսա գլխում, մաս 129, ասվում է.
**«Դուք չեք կարող կանանց հետ
 հավասարապես արդար վարվել,**

նույնիսկ եթե շատ ցանկանաք էլ»:
[Դուրան 4:129].

Այդ իսկ պատճառով
բազմակնությունը դա կանոն չէ,
այլ բացառություն: Շատ մարդիկ
են մոլորության մեջ գտնվում,
կարծելով թե դա կարելու է
մուսուլմանի համար ունենալ
ավելի քան մեկ կին:

Ընդհանուր առմամբ,
Իսլամն ունի գործունեության
հինգ դասակարգում.

(I) «Ֆարդ», այսինքն պարտադիր

(II) «Մուստահաբ», այսինքն
խորհուրդ տալ

(III) «Մուբահ», այսինքն
թուլլատրելի

(IV) «Մակրուհ», այսինքն
անցանկալի

(V) «Հարամ», այսինքն արգելված

Մեծամասնությունը միջին
դասին է պատկանում, **որը
թուլլատրելի է**: Այդ պատճառով չի
կարելի ասել, որ այն մուսուլմանը,
որն ամուսնացած է երկու, երեք
կամ չորս կնոջ հետ ավելի լավն է
այն մուսուլմանից, **որն ունի մեկ
կին**:

4. Կանանց կյանքի միջին
տեւոդությունը ավելի երկար է
քան տղամարդկանցը

Ըստտ բնության,
տղամարդիկ եւ կանայք
մոտավորապես նույն քանակով
են ծնվում: Բայց աղջիկների
դիմադրողականությունը
ավելիբարձր է, քան տղա
մանուկների մոտ: Աղջնակը
կարող է ավելի լավ պայքարել
մանրէների եւ
հիվանդությունների դեմ, քան
տղան: Այդ պատճառով հենց
մանկական հասակում
տղամարդկանց մահացությունը
կանանց հետ համեմատած ավելի
բարձր է:

Պատերազմի ժամանակ էլ
ավելի շատ տղամարդիկ են
մահանում, քան կանայք: Ավելի

շատ տղամարդիկ են մահանում
դժբախտ պատահարներից եւ
հիվանդութիւններից: Կանանց
կյանքի միջին տեւողութիւնը
ավելի շատ է, քան տղամարդկանց
եւ ցանկացած ժամանակ կարելի է
հանդիպել ավելի շատ այրի
կանանց քան տղամարդկանց:

5. Հնդկաստանի բնակչութիւնում
ավելի շատ տղամարդիկ են քան
կանայք կապված
մանկասպանության եւ
հղիության արհեստական
ընդհատման հետ

Հնդկաստանը
հանդիսանում է այն սակավաթիվ
երկրներից մեկը, մյուս հարեւան

երկրների նետ միասին, որտեղ կանացի բնակչությունը ավելի քիչ է, **քան արական սեռի**: Պատճառը կայանում է նրանում, որ կանայք արհեստական վիժում են կատարում, **երբ տեղեկանում են երեխայի սեռի մասին**: Եթե նման սովորույթը դադարեցնեն, **ապա Հնդկաստանում էլ կանայք կգերակշեռն քան տղամարդիկ**:

6. Համաշխարհային փորձը ցույց է տվել, **որ կանացի բնակչությունը ավելի շատ է քան տղամարդկանց**:

ԱՄՆ-ի կանանց թիվը գերազանցում է տղամարդկան թվին **7,8 մլն մարդով**: Միայն Նյու

Յորքում իգական սեռի
բնակչության թիվը մեկ միլիոնով
ավելի է արական սեռի
բնակչության թվից, դրա հետ
մեկտեղ տղամարդկանց 1/3-րդը
համասեռամուկներ են: ԱՄՆ-ում
ընդհանուր առմամբ ապրում է
ավելի քան քսանհինգ միլիոն
համասեռամուկ: Դա ամենի հետ
մեկտեղ, նշանակում է, որ այդ
մարդիկ չեն ցանկանում
ամուսնանալ կանանց հետ: Մեծ
Բրիտանիայում կանայք չորս
միլիոնով ավելի են
տղամարդկանցից,
գերմանիայում՝ հինգ միլիոնով,
իսկ ռուսաստանում ինը միլիոնով:
Միայն Աստված գիտի, թե
աշխարհում կանայք քանի

միլիոնով են ավելի տղամարդկանցից:

7. Սահմանափակումը, որտեղ
յուրաքանչյուր տղամարդ ունի
միայն մեկ կին, **պրակտիկ չէ:**

Նույնիսկ եթե ամեն մի տղամարդ
ամուսնանա մեկ կնոջ հետ, ԱՄՆ-
ում էլի կմնան ավելի քան երեսուն
միլիոն կին, որոնք չեն ունենա
ամուսին (**հաշվի առնելով, որ
Ամերիկայում ապրում
են քսանհինգ միլիոն
համասեռամուկ**): Նույն վիճակը
կլինի Մեծ բրիտանիայի ավելի
քան չորս միլիոն կանանց մոտ,
գերմանիայում հինգ միլիոն
կանանց մոտ եւ ինը միլիոն

կանանց մոտ ռուսաստանում,
այսինքն նրանց մոտ, **որոնք չեն
կարողանա իրենց գտնել
ամուսին:** Ենթադրենք, որ իմ
քույրը մեկն է այն չամուսնացած
կանանցից, որոնք ապրում են
ԱՄՆ-ում եւ ենթադրենք, թե ձեր
քույրը

նույնպես չի ամուսնացել ու
նույնպես ապրում է ԱՄՆ-ում:
Նրանց մնում է ընտրել միայն
երկու տարբերակ. Կամ նրանք
պետք է ամուսնանա մեկ մարդու
հետ, որն արդեն ունի կին, **կամ
նրանք կդառնան բոլորին
հասանելի:** Այն կանայք, ովքեր
համեստ են, **ավելի շուտ կընտրեն
առաջին տարբերակը:**

Կանանց մեծամասնությունը չի ցանկանում իր ամուսնուն կիսել ուրիշ կանանց հետ, բայց Իսլամում երբ նման իրավիճակ է պատահում, մուսուլմանուհիները գերադասում են վերապրել ոչ մեծ անձնական կորուստ, որպեսզի կանխեն մեծ կորուստները, **այսինքն թույլ չտալ մյուս մուսուլման քույրերին դառնալ հանրամատչելի:**

8. Ավելի լավ է ամուսնանալ ամուսնացած տղամարդու հետ, քան դառնալ «**հանրամատչելի կին**»

Արեւմտյան հասարակությունում սովորական է համարվում

ունենալ սիրուհի ու մի քանի ոչ
ամուսնական կապեր: Բայց այդ
դեպքում կինը վարում է
խայտառակ կյանք: Սակայն այդ
նույն հասարակությունը չի կարող
ընդունել մարդու, որն ունի մեկից
ավելի կին ընտանիքում որում
կանայք պահպանում են իրենց
պատվավոր արժանի դիրքը
հասարակության մեջ եւ ունեն
պաշտպանություն կյանքում;

Այսպիսով, կնոջ համար, որը չի
կարող գտնել ամուսին, կա երկու
տարբերակ՝ ամուսնանալ
ամուսնացած տղամարդու հետ
կամ դառնալ «**հանրամատչելի
կին**»: Իսլամը գերադասում է
առաջարկել կանանց պատվավոր

դիրք, թույլ տալով ընտրել
առաջին եւ արգելել երկրորդ
տարբերակը:

Կա մի քանի պատճառ, թե ինչու
Իսլամը թույլատրեց
սահմանափակ բազմակնություն,
սակայն դա հիմնականում
պաշտպանում է կանանց
համեստությունը:

2.

Բազմամուսնություն

Հարց.

Եթե մարդն իրավունք ունի
ուներնալ մեկիցավելի կին, **ապա
ինչու՞ է Իսլամը արգելում կանանց**

ունենալ մեկից ավելի
ամուսին:

Պատասխան.

Շատ մարդիկ, այդ թվում
նաեւ մուսուլմանները, տալիս են
տրամաբանական հարց. Ինչու է
տղամարդուն թույլատրվում
ունենալ մի քանի կին եւ միեւնույն
ժամանակ չի տրվում այդ
«**իրավունքը**» կանանց:

Թույլ տվեք ինձ հենց
սկզբից հայտարարել, որ
խլամական հասարակության
հիմունքները արդար են եւ
հավասար: Այլահը ստեղծեց
տղամարդուն ու կնոջը որպէս
հավասար, բայց տարբեր

հնարավորություններով եւ
տարբեր

պարտականություններով:

Տղամարդիկ ու կանայք տարբեր են եւ ֆիզիոլոգիապես եւ հոգեբանորեն: Նրանց դերերն ու պարտականությունները տարբեր են: Տղամարդիկ ու կանայք հավասար են Իսլամում, **բայց ոչ նույնական:** Սուրա Նիսա (գլուղ 4, երկ 22 – 24) տալիս է կանանց ցանկը, **որոնց հետ մուսուլման տղամարդիկ չեն կարող ամուսնանալ:** Այս մասին նույնպես հիշատակվում է սուրա Նիսա գլուխ 4 երկ 24 « **Եւ ամուսնացած կանայք արգելված են ձեզ համար**»:

Մյուս կետերում
 թվարկված են պատճառները, **թե
 ինչու բազում ամուսիններ
 ունենալը արգելված է Իսլամում:**

1. Եթե տղամարդն ունի մի քանի
 կին, ապա երեխաների ծնողները՝
 ծնված այդ ամուսնությունից,
 հեշտ կորոշվեն, **թե ով է հայրը եւ
 ով է մայրը երեխայի:** Իսկ այն
 դեպքում, երբ կինն ունի մի քանի
 ամուսին, միայն մայրը երեխայի,
 որ ծնվել է նման ամուսնությունից
 ճիշտ բացահայտված կլինի, **եւ ոչ
 մի կերպ հայրը:** Իսլամը մեծ
 նշանակություն է տալիս երկու
 ծնողների ինքնությանը, **եւ մոր եւ
 հոր:** Հոգեբաններն ասում են, որ
 երեխաները, որոնք չգիտեն իրենց

ծնողներին, մանավանդ հորը,
տառապում են ծանր հոգեկան
ցնցումներից ու խախտումներից:
Նրանց մոտ մասնավորապես
դժբախտ մանկություն է լինում:
հենց այդ պատճառով
անառակները չունեն առողջ
երեխա: Երբ նման
ամուսնությունից ծնված երեխան
գալիս է դպրոց, հարցին, թե ով է
երեխայի հայրը, նա պետք է ասի
մի քանի անուն՝ ըստ
ամուսինների քանակի: Ես գիտեմ,
որ գիտության վերջին
նվաճումները հնարավոր են
դարձրել բացահայտել հորը՝
գենետիկ տեստավորման
միջոցով: Այսպիսով, այդ
տեսակետը, որը ճիշտ էր

անցյալում, չի կարող լինել
փաստարկ ներկայում:

2. Տղամարդը իր բնույթով ավելի
բազմակին էակ է քան կինը

3. Կենսաբանորեն ավելի հեշտ է
կատարել իր

պարտականությունները՝ իբր
ամուսին մի քանի կնոջ

առկայության դեպքում: Կանայք
նման իրավիճակում, ունենալով
մի քանի ամուսին, չունեն նման
հնարավորություն որպես կին:

Կինը ենթարկվում է մի քանի
հոգեբանական եւ վարքային
փոփոխության՝ կապված
դաշտանային ցիկլի փուլերի հետ:

4. Կինը, որն ունի մի քանի ամուսին, կունենա մի քանի սեռական գործընկեր, եւ միեւնոյն ժամանակ նա ունի վեներական հիվանդութիւնն ձեռք բերելու մեծ հավանականութիւն, որը կարող է փոխանցվել մյուս ամուսնուն: Նույնիսկ եթէ նրանք չունեն արտամուսնական սեռական մերձեցում: դա չի կատարվում այն տղամարդկանց հետ, որոնք ունեն մի քանի կին, եթէ նրանցից ոչ մէկը չունի արտամուսնական սեռական մերձեցում:

Վերը նշված պատճառները նրանք են, որը կարելի է հեշտ նույնականացնել: Հավանական է

կան շատ ուրիշ պատճառներ, թե ինչու Ալլահը Իր անսահման իմաստությամբ, **արգելեց քազմամուսնությունը:**

3.

Հիջաբ կանանց համար

Հարց.

Ինչու է Իսլամը նվաստացնում կնոջ արժանապատվությունը՝ պահելով նրան քողի տակ:

Պատասխան.

Կնոջ դիրքը Իսլամում հանախ դառնում է հարձակման օբյեկտ աշխարհիկ ՉԼՄ-ներում: «**Հիջաբը**» կամ մուսուլմանական

հագուստը շատերի կողմից
մեջբերվում է որպես
մուսուլմանական օրենքում կնոջ
«**հայատակեցում**»: Նախքան
հիջաբի կրոնական
նշանակության հինավոր
վերլուծումը, **եկեք սկզբից
ուսումնասիրենք կնոջ դիրքը
հասարակության մեջ մինչ
Իսլամի ի հայտ գալը:**

1. Անցյալում կնոջ վիճակը ավելի
վատ էր եւ նրանք օգտագործվում
էին որպես ցանկության եւ
տենչանքի սուբյեկտ:

Պատմության հաջորդ
օրինակում ականառու
լուսաբանվում է այն փաստը, որ

կնոջ կարգավիճակը հին
քաղաքակրթության մեջ շատ
ցածր էր, երբեմն այն աստիճանի,
որ նրանց մերժված էր մարդկային
արժանապատվությունը:

ա. Բաբելոնյան
քաղաքակրթություն.

Կանայք անկում էին
ապրում եւ զրկված էին բոլոր
իրավունքներից՝ ըստ բաբելոնի
օրենքների: Եթե տղամարդը
սպասնում էր կնոջը, ապա ոչ թե
նրան էին պատժում, այլ
կախադան էին հանում նրա
կնոջը:

բ. Հունական
քաղաքակրթություն.

Հունական
 քաղաքակրթությունը համարվում
 էր բոլոր հնագույն
 քաղաքակրթություններից առավել
 զարգացածը: Եւ այդ
 «զարգացած» համակարգում
 կանայք զրկված էին բոլոր
 իրավունքներից եւ նրանց վերից
 էին նայում: Հունական
 առասպելում «կեղծ կինը, որի
 անունն է «Պանդորա»
 հանդիսանում է ողջ
 մարդկության
 դժբախտությունների հիմնական
 պատճառը: Հույները գտնում էին,
 որ կանայք մարդկային որակով
 զիջում էին տղամարդկանց:
 Չնայած նրան, որ կնոջ
 իմաստությունը թանկ էր

գնահատվում էլ այդպիսի կանայք
հարգված էին, **հույները**
ժամանակի ընթացքում խորացան
սեփական նշանակության ել
սեքսուալ այլասերվածության մեջ:
Պոռնկությունը դարձավ
սովորական սովորույթ հունական
բոլոր խավերի միջեւ:

գ.Հռոմեական
քաղաքակրթություն

Երբ հռոմեական
քաղաքակրթությունը իր
«փառքի» գագաթնակետում էր,
տղամարդը նույնիսկ իրավունք
ունէր կնոջը զրկել կյանքից:
Պոռնկությունն մերկությունը

տարածված էր հռոմեացիների մեջ:

դ. Եգիպտական քաղաքակրթություն.

Եգիպտական կանայք հաշվում էին չար ու սատանայի նշան:

ե. Արաբիան մինչ Իսլամը.

Մինչ Իսլամի տարածումը Արաբիայում արաբները կնոջը նայում էին որպես ցածր էակ եւ շատ հաճախ երբ աղջիկ էր ծնվում, նրան ողջ-**ողջ թաղում էին**:

2. Իսլամը բարձրացրեց կնոջ դիրքը, տվեց նրան հավասար

իրավունք էլ սպասում է
նրանիցից պատասխան
գործողություն, **նրանց
կարգավիճակի պահպանման
համար:**

Իսլամը բարձրացրեց կնոջ
դիրքը էլ նրանց տվեց իրավունք
միայն 1400 տարի առաջ: Իսլամը
սպասում է կանանցից
համեստություն իրենց
կարգավիճակի պահպանման
համարԼ

Իսիջաբ տղամարդկանց
համար.

Մարդիկ, որպես կանոն,
քննարկում են «**իիջաբը**» կանանց
ենթատեքստում: Համենայն

դեպս, Սուրբ Ղուրանում
մենք գտնում ենք «հիջար»
տղամարդկանց համար առաջին
հիշատակումները դեռ կանանց
«հիջարից» առաջ: Ղուրանը
հիշատակում է Սուրա Նուր.

«Ասա հավատացյալ
տղամարդկանց, որ նրանք
իջեցնեն իրենց հայացքները եւ
պահպանեն իրենց սեռական
օրգանները: Այդպես կլինի ավելի
մաքուր նրանց համար, ճշմարիտ
որ, Ալլահին հայտնի է ամենը, ինչ
նրանք անում են»: [Ղուրան
24:30].

Այն պահին, երբ
տղամարդը նայում է կնոջ վրա եւ

Եթե լկտի ու անխիղճ միտք է
ծագում նրա գլխում, նա պետք է
հջեցնի իր հայացքը:

Հիշարը կանանց համար.

Սուրա Նուրի հետեւյալ
մասում ասվում է.

«Ասա հավատացյալ
կանանց, որպեսզի նրանք
հջեցնեն իրենց հայացքները եւ
պահպանեն իրենց սեռական
օրգանները: Թող նրանք ի ցույց
չդնեն իրենց
բարեմասնութունները,
բացառությամբ այն մասերի,
որոնք երեւում են, եւ թող ծածկեն
իրենց ծածկոցով կրծքի
բացվածքը եւ ցույց չտան իրենց

գեղեցկությունները ոչ ոքի՝ բացի
իրենց ամուսիններից կամ
հայրերից եւ կամ սկեսրայրներից
կամ էլ որդիներից»: [Ղուրան
24:31].

3. Հիջաբի վեց պայմանները

Ըստ Ղուրանի եւ Սուննի
կան հիմնականում դիտարկման
վեց կետեր

Հիջաբ

1. Երկարություն.

Առաջին չափանիշը
մարմնի չափն է, **որը պետք է լինի
ծածկված**: Դա տարբեր է կանանց
եւ տղամարդկանց մոտ:
տղամարդկանց համար

պարտադիր է մարմնի ծածկումը,
ծայրահեղ դեպքում պորտից
մինչև ծնկները: Կանանց համար
մարմնի ծածկման չափը
պարտադիր է ողջ մարմնի
համար, բացի դեմքից և ձեռքի
մատներից մինչև դաստակը:
Բայց եթե նրանք ցանկանում են,
կարելի են ծածկել նաև մարմնի
այդ մասը: Իսլամն
ուսուլմնասիրողներից ոմանք
պնդում են, որ դեմքն ու ձեռքերը
հանդիսանում են «հիջարի»
պարտադիր մաս:

Մնացած բոլոր հինգ
պահանջները նույնն են թե
կանանց եւ թե տղամարդկանց
համար:

2. Հազուստը պետք է լինի ազատ եւ չպետք է բացի մարմինը

3. Հազուստը չպետք է լինի թափանցիկ

4. Հազուստը չպետք է լինի այնքան գրգռիչ, ոչ հրապուրի հակառակ սեռին

5. Հազուստը չպետք է հիշեցնի, թե ինչ են հազնում հակառակ սեռի ներկայացուցիչները

6. Հազուստը չպետք է երեւա այնպես, **ինչպես հազնվում են անհավատները:**

Պետք չէ այնպիսի հազուստ հազնել, որն ունի հատուկ

նշաններ կամ այլ կրոնների
մակագրություններ

4. Հիջաբը իր մեջ ներառում է
նաեւ վարք

Հիշեք. «հիջաբը» բացի
հագուստի վեց չափանիշներից,
ներառում է նաեւ բարոյական
վարքագիծ, այսինքն վարք,
վերաբերմունք եւ անհատի
մտադրություն: Մարդը, որը
կատարում է միայն «հիջաբի»
որպես հագուստի պայմանները,
կատարում է պատվիրանների
միայն մասամբ:

«Հիջաբը» որպես հագուստ
պետք է ուղեկցվի նաեւ «հիջաբը»
աչքերում, «հիջաբը» սրտում,

«հիջաբը» մտքում եւ «հիջաբը» նպատակներում: Այն նաեւ ներառում է իր մեջ թե ինչպես է մարդը խոսում, **ինչպես է իրեն պահում եւ այլն:**

5. Հիջաբը խանգարում է պնդերեսությունը

Պատճառը, թե ինչու է հիջաբը կարգադրված կանանց, հիշատակվում է Ղուրանում հետեւյալ հատվածում սուրա Ալ-Ահզաբ. «Երբ երեխաները ձեր միջից կհասնեն սեռական զարգացման, թող նրանք հարցնեն թույլտվություն, ինչպես հարցնում են նրանք, **որոնք իրենցից մեծ են:** Այսպես Ալլահը

կրացատրի ձեզ Իր նշանները:
Ալլահը Իմաստուն, Գիտուն»:
[Ղուրան 33:59].

Ղուրանում ասվում է, որ
հիջաբը նախատեսված է կանանց,
որպեսզի նրանք լինեն համեստ եւ
պաշտպանված
նոսնձգություններից:

6. Չույզ քույրերի օրինակը

Ենթադրենք, որ երկու
քույր, որոնք զույգեր են եր որոնք
միանման գեղեցիկ են, **քայլում են
փողոցով:** նրանցից մեկը հագել է
իսլամական հիջաբ, **այսինքն
մարմինը լրիվ ծածկված է բացի
դեմքից եւ ձեռքերից մինչեւ
դաստակը:** Մյուս քույրը

արեւմտյան հոգուսու է կրում,
կարճ շրջագգեստ կամ շորտեր:
իսկ անկյունում թաքնված է
խուլիզանը կամ ավազակը, որը
սպասում է ավարին, որպեսզի
սպառնա աղջկան, **որը կրում է
կարճ շրջագգեստ:** Ման
զգեստները հանդիսանում են
որպես կողմնակի հրավերք
հակառակի սեռին ձգելու համար:
Ղուրանը արդարացիորեն ասում
է, **որ հիջաբը պաշտպանում է
կնոջը ոտնձգություններից:**

7. Մահապատիժ բռնաբարողների
համար

Ըստ իսլամական
շարիատի, եթե տղամարդուն

դատում են կնոջը բռնաբարելու համար, **սպա նրան մահապատժի են ենթարկում: Շատերը զարմանում են այդ «խիստ» դատավճռից: Ոմանք նույնիսկ ասում են, որ Իսլամը անխիղճ վայրագ կրոն է: Ես տվեցի հասարակա հարց հարյուրավոր ոչ մուսուլման տղամարդկանց: Ենթադրենք, Աստված ոչ արարցե, ինչ-որ մեկը բռնաբարել է ձեր կնոջը, **ձեր մորը կամ ձեր քրոջը: դուք աշխատում եք դատավոր եւ բռնացողը կանգնած է ձեր առջեւ: Ինչ պատիժ դուք նրան կտայիք: Նրանք բոլորը հայտարարեցին, որ նրանց պետք է մահվան դատապարտել: Ոմանք ավելի հեռու գնացին ու****

հայտնեցին, որ իրենց նրան
տանջամահ կանեին: հատուկ
նրանց համար ես կասեմ, որ եթե
ինչ-որ մեկը բռնաբարում է ձեր
կնոջը կամ մորը, **դուք ուզում եք
նրան մահվան ենթարկել:** քայց
եթե հանցագործությունը
կատարվել է ուրիշի կնոջ կամ
աղջկա հետ, ապա դուք ասում եք,
**որ մահապատիժը դա
բարբարոսությունն է:** Ինչու այդ
դեպում դուք երկակի դիրք եք
գրավում:

8. Արեւմտյան հասարակությունը
սուտ պնդում է, որ նրանց մոտ
կնոջ կարգավիճակը բարձր է

Արեւմտյան
խոսակցությունները կնոջ
ազատախոհության մասին ոչինչ
չի նշանակում, բացի նրա մարմնի
օգտագործման ծածուկ ձեւից,
նրա հոգեկան վիճակի
վատացումից եւ նրան
պատվազրկումից: Արեւմտյան
հասարակությունը պնդում է, որ
«բարձրացրել է» կնոջը:
Ընդհակառակը, իրականում նա
անկում է ապրել մինչեւ հարճի
աստիճանի, սիրուհու եւ
գիշերային թիթեռնիկների
մակարդակի, որոնք
հանդիսանում են լոկ գործիք
հաճույքներ եւ սեքս փնտրողների
ձեռքին եւ վաճառականների
շահույթ, որոնք դիմակավորվում

են «արվեստի եւ մշակույթի» քողի ներքո:

9. ԱՄՆ-ն ունի բռնաբարության հանցագործության ամենաբարձր ցուցանիշը,

Միացյալ Նահանգները,

ինչպես եւ ենթադրվում է,

հանդիսանում է աշխարհի ամենազարգացած երկիրը:

Այնտեղ բռնաբարությունը

նույնպես ունի ամենաբարձր

ցուցանիշը՝ մյուս երկրների հետ

համեմատած: Համաձայն 1990

թվականի Ոստիկանության

զեկուցման օրեկան միջինը 1756

բռնաբարության դեպք է

գրանցվում միայն ԱՄՆ-ում

բռնաբարության միջինը մինչև 1900 դեպք է գրանցվում: Թե դա որ թվականին, չի ասվում: հնարավոր է դա եղել է 1992 կամ 1993 թվականը: Ստացվում է, որ ամերիկացիները ավելի «համարձակ» են դարձել վերջին տարիներին:

Ուսումնասիրենք մի սցենար, որում ներկա է իսլամական խիջարը, այնուհետև դրա ենթատեքստում՝ Ամերիկան: Ամեն անգամ երբ տղամարդը նայում է կնոջ վրա եւ ամեն անգամ լկտի եւ անամոթ միտք է ծագում նրա գլխին, նա իջեցնում է աչքերը: Յուրաքանչյուր կին կրում է իսլամական խիջար,

այսինքն մարմինը լրիվ ծածկված է, բացի դեմքից եւ ձեռքերից մինչեւ դաստակ: Այսպիսով, եթե մեկը կատարի բռնաբարություն, նա ստանում է պատժի առավելագույն չափը: Ես ձեզ հարցնում եմ, այդ դեպքում կշատանան բռնաբարությունների թիվը Ամերիկայում, կկանգնի նույն մակարդակի վրա թե՛ կիջնի:

10. Իսլամական շարիաթի իրականացումը թույլ կտանվազեցնել բռնաբարությունների թիվը:

Բնական է, հենց որ իսլամական շարիաթը իրականացվի, դրական

արդյունքը անխուսափելի է: Եթե իսլամական շարիաթը իրականացվի աշխարհի յուրաքանչյուր մասում, լինի դա Ամերիկան, թե Եվրոպան, **հասարակությունը կսկսի հեշտ շնչել: Հիջաբի կրումը չի նվաստացնի, այլ կբարձրացնի կնոջը եւ կպահպանի նրա համեստությունն ու առաքելությունը:**

4. Ինչու՞ է Իսլամը տարածվում արդյ

Հարց.

Ինչպես կարելի է Իսլամը կոչել իսադադության կրոն, երբ նա տարածվել է բռնությամբ:

Պատասխան.

Այդ տարածված կարծիքը որոշ ոչ մուսուլմանների մոտ է, որ Իսլամը չէր ունենա այդքան հետեւորդներ ողջ աշխարհում եթե նա չգործադրեր բռնություն: Հաջորդ կետերը բացատրում են, որ ամեն ինչ չէ որ տարածվում է սրով, ավելի շուտ դրան աջակցում են ճշմարտության ուժը, գիտակցությունը եւ տրամաբանությունը _ հատկապես դրանք են պատասխանատու իսլամի արագ տարածման համար:

1. Իսլամ նշանակում է խաղաղություն

Իսլամը ծագել է «սալամ»
արմատից, որը նշանակում է
խաղաղություն: Այդ բառը
նույնպես նշանակում է
տրամադրել իր կամքը Ալլահին
(Մուրբ է Նա ու Մեծ): Այսպիսով
Իսլամը հանդիսանում է
խաղաղության կրոն, որ մարդը
ձեռք է բերել՝ տրամադրելով իր
կամքը Արարչի՝ Ալլահի կամքին
(Մուրբ է Նա եւ Մեծ):

1. Երբեմն պետք է ուժ
գործադրել խաղաղության
պահպանման համար

Ամեն մարդկային էակ չէ, որ
ապրում է խաղաղության եւ
ներդաշնակության համար: Կան

շատերը, որոնք խախտում են այն
հրենց սեփական շահագիտական
հետաքրքրություններից ելնելով:

Այդ դեպքում ուժը պետք է
կիրառվի խաղաղության
պահպանման համար: Ինչպես այդ
պատճառով մենք ունենք
ուստիկանություն, որոնք
կիրառում են ուժ
հանցագործների եւ
հակահասարակական տարրերի
դեմ, որպեսզի պահպանվի կարգը
եւ խաղաղությունը երկրում:

Իսլամը աջակցում է
խաղաղությանը, միևնույն
ժամանակ Իսլամը իր
հետեւորդներին կոչ է անում
պայքարել այնտեղ, ուր կա
կեղեքում: Պայքարը կեղեքման

դեմ երբեմն պահանջում է ուժի իրառում: Իսլամում ուժը կարող է կիրառվել միայն խաղաղության եւ արդարության պահպանման համար:

1. Պատմաբան Դե Լեյս օ՛ղիրի կարծիքը

Մա լավագույն պատասխանն է այն սիսալ կարծիքի, **թե Իսլամը տարածվել է թրով**: Հայտնի պատմաբան Դե Լեյս օ՛ղիրի գրքում «Իսլամը խաչմերուկի վրա» (սթ. 8) գրում է. «Լեզենդը մոլեռանդ մուսուլմանների բազմության մասին, որոնք զավթում են աշխարհը եւ ստիպում մարդկությանը ընդունել

իսլամը ու թրի միջոցով նվաճել ցեղերը, հանդիսանում է առավել անհեթեթ առասպելներից մեկը»:

4. Մուսուլմաններն ղեկավարում էին Իսպանիան 800 տարի:

Մուսուլմաններն ղեկավարում էին Իսպանիան 800 տարի:

Մուսուլմաններն Իսպանիայում երբեք չեն օգտագործել թուր, որպեսզի մարդկանց ստիպեն ընդունել իսլամ: Ավելի ուշ քրիստոնյա խաչահիրները եկան Իսպանիա եւ ոչնչացրեցին մուսուլմաններին: Չկար ոչ մի մուսուլման Իսպանիայում, որը կարողանար բաց արտասանել ազանը, այսինքն աղոթքի կոչը:

1. 14000000 արարները – դա քրիստոնյա դպիրներն էին

Մուսուլմաններն տիրապետում
էին Եգիպտոսին 1400 տարի: Մի
քանի տարի դրանք բրիտանական
տիրապետության տակ էին, **իսկ
որոշ ժամանակ էլ՝ ֆրանսիական:**
Ընդհանուր, **մուսուլմանները
տիրապետեցին Եգիպտոսին 1400
տարի:** Սակայն այսօր գոյություն
ունեն 14 միլիոն արարներ, **որոնք
դպիրներ էին:** Այսինքն
քրիստոնյաներ: Եթե
մուսուլմանները օգտագործեին
այնտեղ սուր, ապա չէր լինի ոչ մի
արար, **որը քրիստոնյա կլիներ:**

1. Ոչ մուսուլմանների ավելի քան 80% ապրում է Հնդկաստանում:

Մուսուլմաններն տիրապետում էին Հնդկաստանին մոտ հազար տարի: Եթե նրանք ուզենային, կարող էին դարձնել Հնդկաստանի յուրաքանչյուրին ոչ մուսուլմանին **Իսլամիստ**: Այսօր Հնդկաստանի բնակչության ավելի քան 80%-ը **մուսուլման չէ**: Այդ հնդկացի բոլոր ոչ մուսուլմանները այն բանի պարզ օրինակն էին, **որ իսլամը չի տարածվել բռնի**:

1. Ինդոնեզիան եւ Մալազիա:

Ինդոնեզիան այն երկիրն է, **որ ունի մաքսիմալ թվով**

մուսուլմաններ աշխարհում:

Մալազիայի մեծամասնությունը
մուսուլմաններ են: Այդ դեպքում
կարելի է նրանց հարցնել.

«Ինչպիսի մուսուլմանական
զորքեր են պատերազմել
Ինդոնեզիայում եւ
Մալազիայում»:

8. Աֆրիկայի արեւելյան ափերը:

Բացի այդ, Իսլամը արագ
տարածվե է աֆրիկայի երեւելյան
ափերում: Կարելի է նաեւ
հարցնել. Որտեղ է Իսլամը
տարածվել սրի միջոցով եւ ինչ
մուսուլմանական բանակներ են
հափշտակել Աֆրիկայի արեւելյան
ափերը:

9. Թոմաս Կարլեյլ:

Հանրահայտ պատմաբան Թոմաս Կարլեյլը իր « Հերոսներ եւ խոնարհում հերոսներիին», մեկնաբանում է Իսլամի տարածման մասին մոլորությունը այսպես. «բայց մենք նաեւ թույլ ենք տալիս կոպիտ սխալ, եթե ընդունում ենք նման ենթադրությունը որպես փաստ ի օգուտ հայտնի կրոնի ճշմարտության կամ խաբուսիկության: Հիրավի սուրը, բայց ինչ հանգամանքներով եք դուք մերկացնում այդ սուրը: Ցանկացած նոր միտք իր ծագման ժամանակ հանդիսանում է միակը: Միայն մեկ մարդու

գլխում – ահա թե որտեղ է ծնվում սկզբում: Միայն մեկ մարդ ամբողջ աշխարհում երկրպագում է նրան. Այսպիսով մեկը դեմ է դուրս գալիս բոլորին: Եթե նա վերցնի սուրը եւ այն ձեռքին քարոզի իր միտքը, **սպա այն քիչկօզնի իրեն:** Դուք սկզբում պետք է ձեռք բերեք ձեզ համար սուր: Ընդհանրապես, ցանկացած կարծիք ձգտում է տարածվել ամեն կերպ, որով միայն կարող է»:

10. Կրոնում չեն ստիպում

Ինչու Իսլամը տարածել թրով:
Եթե նույնիսկ բոլոր
մուսուլմանները լինեին թրով,

նրանք չէին կարողանա այն
օգտագործել Իսլամի տարածման
համար, քանի որ Ղուրանը
հաջորդ երկուսն ասում է.

«Չկա ստիպողական կրոն: Ուղիղ
ճանապարհը արդեն տարբերվում
է մոլորությունից: [Ղուրան 2:256].

11. Ինտելեկտի թուրը:

Ղուրանը դա
ինտելեկտուալ սուր է: Թուրը, որը
գրավում է սրտերն ու մտքերը
մարդկանց: Ղուրան սուրա
մեղուներ, գլուխ 16, երկ 125
ասում է. «Կանչիր հետեւելու
Աստծո ուղուն իմաստությամբ եւ
բարի լուրով եւ քննարկիր նրանց
հետ լավագույն ձեւով: Ճշմարիտ,

քո Աստվածը ավելի լավ գիտի նրանց, ով շեղվել է նրա ճանապարհից, եւ լավ գիտի նրանց, ով հետուուում է ճիշտ ուղում»։ [Բուրան 16:125]

12. Համաշխարհային կրոնների ավելացումը 1934-ից 1984 թթ.:

1986թ. «Ալմանախի» հոդվածում Ռիդերգ Դայջեստը ցույց է հիմնական կրոնների քանակի ավելացման տոկոսի վիճակագրությունը վերջին կես դարի՝ 1934-ից 1984թթ.: Այդ հոդվածը նաեւ հայտնվեց «Իստինա» թերթում: Առաջին աստիճանին Իսլամն էր, որը ընդլայնվել է 235%-ով, իսկ

քրիստոնեությունը՝ միայն 47%-
ով: Կարելի՞ է հարցնել, ինչ
պատերազմ տեղի ունեցավ
անցյալ դարում, որ միլիոնավոր
մարդկանց փոխեց Իսլամի:

13. Իսլամը հանդիսանում է
ամենաարագ աճող կրոնը
Ամերիկայում եւ Եվրոպայում:

Այսօր ամենաարագ աճող
կրոնը Ամերիկայում Իսլամն է:
Ամենաարագ աճող կրոնը
Եվրոպայում նույնպես Իսլամն է:
Ո՞ր սուրն է ստիպում այդքան
շատ քանակով մարդկանց
Արեւմուտքում ընդունել Իսլամը:

14. Դոկտոր Չոզեֆ Ադամ
Պիրսոնի կարծիքը:

Դոկտոր Ջոզեֆ Ադամ
Պիրսոնը արդարորեն ասում է.
«Մարդիկ, ովքեր վախենում են,
թե միջուկային զենքը մի գեղեցիկ
օր կհայտնվի արաբների ձեռքում,
չեն հասկանում, որ իսլամական
ռուսքը եկել է արդեն վաղուց.
Արդեն եկել է օրը եւ Մուհամմեդը
ծնվել է (խաղաղություն նրան եւ
օրհնություն)»:

5. Մուսուլմանները՝ Ֆունդամենտալիստներ եւ ահաբեկիչներ

Հարց.

Ինչու՞ է մուսուլմանների
մեծամասնությունը

Ֆունդամենտալիստներ եւ
ահաբեկիչներ:

Պատասխան.

Այդ հարցը հաճախ տալիս
են մուսուլմաններին ուղիղ կամ
անուղղակի, կրոնների կամ
աշխարհի իրադարձությունների
մասին ցանկացած զրույցում:

Մուսուլմանների մասին
կարծրատիպերը հավերժացվել են
ՉԼՄ-ների ցանկացած ձեւում եւ
ուղեկցվում են Իսլամի ու
մուսուլմանների մասին սխալ
ինֆորմացիայով եւ
ապակողմնորոշմամբ:

Իրականում, նման
ապակողմնորոշումը եւ սուտ

քարոզչությունը հաճախ բերում է
խտրականության եւ բռնության
մուսուլմանների հանդեպ: Խոսքը
գնում է Օկլահոմայում ռումբի
պայթյունից հետո ամերիկյան
ՉԼՄ-ներում մուսուլմանական
կազմակերպությունների դեմ
պայքարի մասին, որտեղ
մամուլը շտապեց հայտարարել
«միջին արեւելյան
պայմանավորվածության» մասին:
Հանցագործը, ինչպես
հետագայում պարզվեց,
ամերիկյան զինված ուժերի
զինվոր էր:

Տեսնենք, թե ինչ է
«Ֆունդամենտալիզմը» (կամ

«արմատականություն») եւ
«ահաբեկչությունը»

1. «Ֆունդամենտալիզմ» բառի
սահմանումը.

Ֆունդամենտալիստը դա
այն մարդն է, որը հետեւում է
պահպանում է դոկտրինի կամ
տեսության հիմքերը: Որպեսզի,
օրինակ, լինել լավ բժիշկ, պետք է
իմանալ տեսությունը եւ այն
կիրառել բժշկության
գործնականի հիմքի վրա: Այլ
կերպ ասած՝ պետք է լինել
ֆունդամենտալիստ՝ բժշկության
ասպարեզում: Լինել լավ
մաթեմատիկ նշանակում է, որ
պետք է իմանալ, հետեւել եւ

կիրառել գործնականում
մաթեմատիկայի հիմունքները:
Պետք է լինել ֆունդամենտալիստ՝
մաթեմատիկայի ասպարեզում:
Իսկ լավ գիտնական լինել
նշանակում է իմանալ, **հետել էլ ել**
կիրառել գործնականում
գիտության հիմունքները:
Հետեւաբար՝ պետք է լինել
ֆունդամենտալիստ՝ գիտության
ասպարեզում:

2. Ոչ բոլոր
«**ֆունդամենտալիստներն**» են
միատեսակ

Ոչ ոք չի կարող նկարագրել
ֆունդամենտալիստների մի
հատկանիշով: Ոչ ոք չի կարող

դասակարգել բոլոր
Ֆուլնդամենտալիստներին որպես
լավ կամ որպես վատ: Ցանկացած
Ֆուլնդամենտալիստների նման
դասակարգումը կախված կլինի
ասպարեզից կամ

գործունեությունից, **որում նրանք
հանդիսանում են որպես**

Ֆուլնդամենտալիստ:

Ֆուլնդամենտալիստ-

հափշտակիչը կամ գողը

հասարակությանը վնաս է

պատճառում եւ այդ պատճառով

անցանկալի է:

Ֆուլնդամենտալիստ-բժիշկը, մյուս

կողմից, օգուտ է բերում եւ

վայելում է մեծ հարգանք:

3. Ես հպարտ եմ, որ մուսուլման ֆունդամենտալիստ եմ:

Ես ֆունդամենտալիստ եմ եւ մուսուլման, որը Ալլահի ողորմությամբ, գիտի ինչին պետք է ձգտել եւ իրականացնել գործով Իսլամի հիմունքները: Իսկական մուսուլմանը չի հրաժարվի նրանից, որպեսզի դառնա ֆունդամենտալիստ: Ես հպարտ եմ, որ ես ֆունդամենտալիստ-մուսուլման եմ, որովհետեւ գիտեմ. Իսլամի հիմունքները օգտակար են մարդկության եւ ողջ աշխարհի համար:

Չկա ֆունդամենտալ Իսլամ, որը վնաս է պատճառում կամ

մարդկության շահերին դեմ է հանդես գալիս: Իսլամի հետ կապված շատ մարդիկ մոլորության մեջ են եւ Իսլամի շատ ուսմունքներ դիտարկում են անարդար կամ ոչ ճիշտ: Դա կապված է Իսլամի մասին ոչ բավարար եւ ոչ ճիշտ գիտելիքներ ունենալու հետ: Եթե վերլուծենք Իսլամի ուսմունքը բաց հոգով, հնարավոր չէ հեռանալ այն փաստից, որ Իսլամը հանդիսանում է որպես մեծ առավելություն ինչպես անձնական, այնպես էլ խմբակային մակարդակում:

4. «Ֆունդամենտալիզմ» բառի բառարանային նշանակությունը:

Համաձայն Վերստեռնի
բառարանի «Ֆուլնդամենտալիզմ»
տերմինը նշանակում էր
ամերիկյան բողոքականության
շարժում, որն առաջացել է 20-րդ
դարի առաջին կեսում: Դա
մոդերնիզմի հանդեպ ռեակցիա
էր, եւ բառը ընդգծում էր
Աստվածաշնչի
անսխալականությունը ոչ միայն
հավատքի եւ բարոյականության
հարցերում, այլ նաեւ որպես
բառացիորեն պատմական
գործընթաց: Այն կառուցվում էր
Աստվածաշնչի՝ որպես Աստծո
բառացի խոսքի, հավատքի վրա:
Այդպիսով, «Ֆուլնդամենտալիզմ»
բառը սկզբնականում
օգտագործվում էր

քրիստոնյաների խմբերի կողմից,
որոնք համարում էին, որ
Աստվածաշունչը նշանակում էր
Աստծո բառացի խոսքը՝ առանց
սխալների: Համաձայն Օքսֆորդի
բառարանի,

«Ֆունդամենտալիզմը»

նշանակում է «ցանկացած կրոնի,
հատկապես Իսլամի, հին ու
ֆունդամենտալ դոկտրինների
խիստ պահպանում»: Այսօր եկել է
այն ժամանակը երբ մարդը,
օգտագործելով

«Ֆունդամենտալիստ» բառը, նախ
եւ առաջ մտածում է
մուսուլմանների մասին, որը
հանդիսանում է ահաբեկիչ:

5. Յուրաքանչյուր մուսուլման ահաբեկիչ է:

Յուրաքանչյուր մուսուլման պետք է լինի ահաբեկիչ: Ահաբեկիչը դա մարդ է, որը վախ է առաջացնում: Այն պահին, երբ ավազակը տեսնում է ոստիկանին, նա ահաբեկվում է: Ոստիկանը գողի համար ահաբեկիչ է: Ճիշտ այդպես էլ, յուրաքանչյուր մուսուլման պետք է լինի ահաբեկիչ հակահասարակական տարրերի համար, ինչպիսիք են գողերը, ավազակները եւ բռնակալները: Ամեն անգամ, երբ նման հակահասարակական տարրը տեսնում է մուսուլմանին, նա

պետք է լինի ահաբեկված: Դա
ճիշտ է, որ «**ահաբեկիչ**» բառը
սովորաբար նշանակում է մարդ,
որը հասարակ մարդկանց մեջ
վախ է ստեղծում: Բայց իսկական
մուսուլմանը պետք է լինի միայն
ընտրյալ ահաբեկիչ, այսինքն
պետք է լինի միայն
հակահասարակական տարրերի
համար, **այլ ոչ թե անմեղ
մարդկանց**: Իրականում,
մուսուլմանը պետք է լինի
խաղաղության աղբյուր անմեղ
մարդկանց համար:

6. Տարբեր պիտակներ նույն
դեմքերի եւ նույն
գործողությունների համար:

Խոսենք, օրինակ, այն մասին, կա ինչ որ ընդհանուր բան «**ահաբեկիչ**» եւ «**հայրենասեր**» բառերի միջեւ: Մինչ Հնդկաստանի անկախացումը բրիտանական իշխանությունից, Հնդկաստանի ազատության համար որոշ պայքարողներ բրիտանական կառավարության կողմից ընդունվում էին որպես **ահաբեկիչներ**: Այդ մարդիկ տեղի բնակչության աջակցությունն էին ձեռք բերում այդ գործողությունների համար եւ նրանց ողջունում էին, որպես «**հայրենասերների**»: Այսպիսով, երկու տարբեր պիտակներ էին դրված նույն մարդկանց կողմից նույն գործողությունների համար:

Ոմանք նրանց անվանում էին
 ահաբեկիչներ, **իսկ մյուսները՝
 հայրենասերներ:** Նրանք, ովքեր
 կարծում էին, որ Բրիտանիան
 ուներ Հնդկաստանի վրա իշխելու
 իրավունք, այդ մարդկանց
 անվանում էին ահաբեկիչներ, իսկ
 նրանք, ովքեր կարծում էին, որ
 Բրիտանիան իրավունք չուներ
 Հնդկաստանը կառավարելու,
**նրանց անվանում էին
 հայրենասեր եւ ազատության
 համար պայքարողներ:** Այդ
 պատճառով շատ կարելու է, մինչ
 դատելը, **անցկացնել արդար դատ:**
 Պետք է լսել երկու կողմերի
 փաստարկները եւ իրադրությունը
 պետ է վերլուծվի բազմակողմ,
 դրա պատճառները եւ մարդկանց

նպատակները պետք է ուշադրության տակ առնվեն, եւ միայն այդ ժամանակ մարդուն կարելի կլինի դատել:

7. Իսլամ նշանակում է խաղաղություն:

Իսլամը առաջացել է «սալամ» բառից, որը նշանակում է խաղաղություն: Այդ խաղաղ կրոնը սովորեցնում է իր երկրպագուներին աջակցել եւ ամրացնել խաղաղությունն ամբողջ աշխարհում: Այդպեսով, յուրաքանչյուր մուսուլման պետք է հետելի խաղաղության կրոնի՝ Իսլամի հիմունքներին: Նա պետք է լինի ահաբեկիչ միայն

հակահասարակական տարրերի
դեմ՝ հասարակությունում
խաղաղության եւ արդարության
իրականացման նպատակներով:

6. Մուսուլմանները Ոչ բուսական խոհանոց

Հարց.

Կենդանու սպանությունը
դա անխիղճ գործողություն է:
Ինչու՞ են մուսուլմանները
օգտագործում միս:

Պատասխան.

«Բուսակերությունը» այժմ
շատ հայտնի շարժում է ողջ
աշխարհում: Շատերը նույնիսկ
այն կապում են կենդանիների

